## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
## ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶՊԵՏ

# ԿԱՐԳԱԴՐՈՒԹՅՈՒՆ

<< 04 >> << փետրվարի >> 2019թ. N Ա-9/06-2019

### ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ ՍՏԵՂԾԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 16-րդ հոդվածի առաջին մասով և հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության 2019թվականի աշխատանքային ծրագիրը՝ 2019թվականի ձմռան ամիսներին տեղացած ձյան և գարնանային անձրևների հետևանքով հնարավոր հեղեղումներից և գետերի վարարումից մարզի բնակչության գույքը,գյուղատնտեսական հողատարածքները և ցանքատարածությունները պաշտպանելու, հեղեղումների անվտանգ անցկացումը ժամանակին և արդյունավետ կազմակերպելու, մարզում գետերի ու հեղեղատարների առավել վտանգավոր հատվածների հուների մաքրումն ու ափերի ամրացման միջոցառումների ու աշխատանքների ցանկը կազմելու նպատակով.

**Կարգադրում եմ.**

1. Ստեղծել հանձնաժողով համաձայն հավելվածի:

2. Հանձնաժողովին /Ա. Ղուկասյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված աշխատանքներին մասնակից դարձնել <<Ջրառ>> ՓԲԸ-ի տնօրենին / համաձայնությամբ/ և Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի համայնքների ղեկավարներին /համաձայնությամբ/:

3.Հանձնաժողովին /Ա..Ղուկասյան/՝ սույն կարգադրությամբ նախատեսված ուսումնասիրությունները և աշխատանքները ավարտել մինչև 2019 թվականի փետրվարի 20-ը և կատարման մասին զեկուցել Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետին:

4.Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի ֆինանսական և սոցիալ-տնտեսական զարգացման վարչությանը / Վ.Մկրտչյան/ սահմանված կարգով իրականացնել գործուղման ծախսերի վճարումը:

5.Սույն կարգադրությունն ուժի մեջ է մտնում արձակման պահից:

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

04.02.2019

X

VERIFIED OCSP 04.02.2019 14:39:47 GMT+4

Подписано: MATEVOSYAN HAMBARDZUM 2809920230

Մարզպետ՝

Հ.Մաթևոսյան

0901 ք. Արմավիր, Աբովյան -71, Հեռ.՝ 0237/2-37-16, Ֆաքս 010/28-06-46, Էլ. փոստ armavir.qartughar@mta.gov.am

Հայաստանի Հանրապետության
Արմավիրի մարզպետի
2019 թվականի փետրվարի 04-ի
N 03/08-2019 կարգադրության

ԿԱԶՄ

| | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահ՝ Ա. Ղուկասյան | Հայաստանի հանրապետության Արմավիրի Մարզպետի տեղակալ |
| ***Անդամներ՝*** Ա. Այվազյան - | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության պետ |
| Մ. - Սարիբեկյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի պետ |
| Ս.Մխիթարյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |
| Կ.Պետրոսյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության գյուղատնտեսության բաժնի գլխավոր մասնագետ |
| Գ.Մելիքյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի պետ |
| Վ.Միրզախանյան | Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի գլխավոր մասնագետ |

Կ.Մարգարյան - Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզպետարանի գյուղատնտեսության և բնապահպանության վարչության բնապահպանության բաժնի առաջատար մասնագետ

Գլխավոր քարտուղարի պաշտոնակատար՝ Վ.Վարդազարյան

04.02.2019

X

VERIFIED OCSP 04.02.2019 10:56:04 GMT+4

Подписано: VARDAZARYAN VARDAN 1704780217